

Հոդված 142. Մարդկանց իրավահավասարությունը խախտելը

1. Մարդկանց հավասարության իրավունքի խախտումը՝ կախված ռասսայից, մաշկի գույնից, լեզվից, սեռից, կրոնական պատկանելությունից, հավատքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկական, սոցիալական, դասային պատկանելությունից կամ հասարակական միավորման պատկանելությունից, ծագումից, բնակության վայրից կամ գույքային դրությունից, որը եականորեն խախտել է մարդու իրավունքները՝

պատժվում է տուգանքով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկ տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները, որոնք կատարվել են՝

ա) օգտագործելով պաշտոնեական դիրքը;

բ) առաջացնելով ծանր հետևանքներ՝

պատժվում են տուգանքով կամ ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով և պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 142¹. Ռասսայական խտրականություն

1. Ռասսայական խտրականությունը, այսինքն՝ գործողությունը՝ ուղղված ազգային կամ ռասսայական թշնամանք կամ կոռիվ հարուցելուն, ազգային պատվի և արժանապատվության նվաստացմանը, ինչպես նաև մարդու իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակմանը՝ ռասսայի, մաշկի գույնի, սոցիալական պատկանելության, ազգային կամ էթնիկական ծագման պատճառով, կամ անձին նույն հիմքերով առավելության վերագրումը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև երեք տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները՝ կատարված.

ա) կյանքի և առողջության համար վտանգավոր բռնությամբ կամ նման բռնության կիրառման սպառնալիքով;

բ) պաշտոնեական դիրքի օգտագործմամբ՝

պատժվում են ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված արարքները՝

ա) կատարված անձանց խմբի կողմից;

բ) մահվան կամ այլ ծանր հետևանքի էլքով՝

պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից յոթ տարի ժամկետով:

Հոդված 155. Կրոնական ծեսերի կատարմանն անօրինական խոչընդոտելը

1. Երկրպագության կամ կրոնական այլ ծեսերի կամ սովորույթների կատարմանը անօրինական խոչընդոտելը բռնության կիրառմամբ կամ բռնության սպառնալիքով, կամ հավատացյալների կամ քահանաների կրոնական զգացմունքների վիրավորմամբ՝

պատժվում է տուգանքով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև մեկ տարի ժամկետով կամ ազատազրկմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունները՝ կատարված պաշտոնեական դիրքի օգտագործմամբ՝ պատժվում են տուգանքով կամ ազատազրկմամբ՝ մեկից հինգ տարի ժամկետով՝ պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ մինչև երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Հոդված 166. Քաղաքական, հասարակական կամ կրոնական միավորումների ստեղծմանը կամ դրանց գործողությանը խոչընդոտելը

Քաղաքական, հասարակական կամ կրոնական միավորումների ստեղծմանը կամ դրանց գործունեությանը խոչընդոտելը՝ բռնության կիրառմամբ, բռնության սպառնալիքով կամ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ՝ պատժվում է տուգանքով կամ ուղղիչ աշխատանքներով՝ մինչև մեկ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ նույն ժամկետով: